

ՆԻԻԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

ՄԱՀՄԵԳԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ

Ա.

ՄԱՀՄԵԳԻ ԳԼՇՆԱԳԻՐԸ

Մահմեդը իսլամական կրօնի հիմնադիրն է, ծնունդ՝ 571 թուականին Մեքքայում: Նրա անունով իսլամությունը կոչում է նաև մահմեդականություն: Նա հեղինակն է կամ խմբագրողը Ղուրանի, որը մահմեդականություն սուրբ գիրքն է: Ղուրանը ժի. դարում հայերենի է թարգմանուել Ստեփանոս Լեհացու ձեռքով: Մեր օրերում Ղուրանը թարգմանուել է նաև արեւելեան աշխարհաբարի<sup>2</sup>:

Յայտնի է նաև Մահմեդի անունը կրող մի դաշնագիր, որով նա իրեն հարկատու քրիստոնեայ ազգերին պաշտպանութիւն եւ հովանաւորութիւն է շնորհում՝ հիջրի 3-րդ կամ 4-րդ տարում, որ է՝ 625/26 կամ 626/27 թուականը: Ունենք այդ դաշնագրի հայերէն հին թարգմանութիւնը, որը հաւանաբար կատարուած է արաբերէն բնագրից՝ դըրուած՝ «Մովիէ ձեռագրագրով»: Իսկ պարսկերէնից, «գրեալ ձեռամբ Ալիի», ունենք հայերէն երկու նոր թարգմանութիւններ՝ ժի. դարում կատարուած: Ինչպէս երեւում է՝ կան նաև հայերէն թարգմանութիւններ, որոնք կատարուած են նոյն դաշնագրի՝ գոյութիւն ունեցող թուրքերէն բնագրից:

Հայաստանում արաբական, պարսկական եւ թուրքական տիրապետութիւնների շրջաններում հայերը, բարեացակամ վերաբերմունք եւ որոշ արտօնութիւններ ապահովելու ձգտումով, աշխատել են ժամանակ առ ժամանակ այս դաշնագրի վերանորոգուած ու վաւերացուած օրինակներ ձեռք

բերել մահմեդական իշխողներից. այս առիթներով էլ նրա որոշ օրինակների սկզբում առաջացել են «տուեալ առ ազդն քրիստոնէից կամ Հայոց» բառերը եւ կամ նոյնիսկ «Դաշնագիր Մուհամմէտի ընդ Հայոց» խորագիրը, թէեւ բնագրի ներսում չկայ որեւէ յատուկ յիշատակութիւն, որը հայերին վերաբերի:

Մահմեդի անունը կրող դաշնագրի հայերէն թարգմանութիւնները կարելի է բաժանել երեք կարգի՝ ըստ թարգմանութեան սկզբնաղբերի:

1. Հին թարգմանութիւն արաբերէնից (°).

Վասի Մահմէտին, վասն քրիստոնէից ազգի խմար, քրիստոն կաթուղիկուսներաց, Մովիէ ձեռագրագրովն, եւ ներքոյ գրեալ փեղամպարին ջամիաքին հուզուրումն. էլ ով որ հագիր էր անմէրանին, մի ըստ միոյժ ներքոյ գրած այ, որ Մէյդիկայ գրեցաւ. «Մահմատ փեղամպարին գրածն, Աստուծոյ ահսին վերէն, որ հուջաքուլայ յնի քրիստոնէից խմար, յարեւել մինչեւ յարեւմուտ, յիմաստնոց եւ յիմարաց խմար, հեռաւորաց եւ մօտաւորաց. գիրքն շահրին վերայ վասիաք արար, ով որ էս գիրս ամալ լինի արարել, յիմքն քուրք այ...», Երեւանի Պետ. Մատենադարանի ձեռ. No. 6984, էջ 303բ—305բ:

Բացի այս No. 6984 օրինակից՝ Պետ. Մատենադարանի գրչազրբերում մեզ յայտնի են ուրիշ օրինակներ եւս՝ No. 2826 եւ No. 8056: Երեք ձեռագրերում էլ դաշնագիրը գտնուում է Ղուրանի վերջում: Ձեռագրերը երեքն էլ ժի. դարի ընդօրինակութիւններ են: Նրանցից՝ միայն No. 6984-ն է, որ Ղուրանի վերջում եւ դաշնագրից առաջ ունի գրչի յիշատակարան ու տարեթիւ, եւ հաւանաբար հնագոյնն է:

«Փ[առք ամենա]կարողին Հօր եւ [եւ Որդւոյ եւ Հո]գւոյն սրբոյ: Աւարտեցաւ Ղօրան Մահմատին որ է Համատան քաղաք, ի թվին

<sup>1</sup> «Այս է գիր օրինաց Հազարացւոց կամ Իսմայէլացւոց, որ կոչի Ղուրան», Երեւանի Պետ. Մատենադարանի ձեռ. No. 3109, էջ 5ա—231ա:  
Թարգմանութիւնը լատիներէնից է կատարուել: Այս թարգմանութեան մի ուրիշ օրինակի մասին տես՝ Մ. Յ. Սեթեանց, «Հայ ձեռագիր Ղուրան մի ի Հնդկիս (Թարգմ. Ստեփաննոս վարդապետի Իլո-վեցւոյ)», Բազմավէպ, 1924, էջ 166—169 եւ 204—207:  
<sup>2</sup> «Ղուրան: Թարգմանեց արաբերէնից հայերէնի՝ Աբր. Ամիրխանեանց», Վառնա, 1909:

Փրկչին ՌէձՁ, իսկ Հայոց թվին ՌձԾԵ, յունվարի սկիզբն՝ առաջին, ձեռամբ Աբրիտակէս իրիցւոյ Համատանցւոյ. ով ոք կարգայ եւ ստուգիւնն տուն առ տուն իմասցի, Ա. Հայր-մերիւ զմեղաւորս յիշեցէ, ամէն» (էջ 303ա)<sup>3</sup>:

Դաշնագրի վերջաբանութեան մէջ կան վկաների անունները կամ ստորագրութիւնները.

«էս վկայից առաջեւն որ էս գիրս գրեցաւ. Աբուբէքր, Օմար Խաթաբ, Օսման՝ Աֆանի որդի, Ալի՝ Ապի Թալուպի որդի, Մովիայ՝ Մաֆիանի որդի, Աբուզարգայ, Աբուզառա, Աբուհուրէրայ, Աբուլայ՝ Աբասի որդի, Համզայ՝ Մութալուպի որդի, Ֆուդէլ՝ Աբասի որդի, Սայլա՝ Մայլաի որդի, Թալհայ՝ Աբուլայ օղլի, Սայլա՝ Յիբայի որդի, Սայիթ՝ Ղէիսի որդի, Ջէյիտ՝ Սայիթի որդի, Աբուլայ՝ Ջէյիտի որդի, Յարուշ Բ, Ջէյա՝ Աբուլայ օղլի, Աբուլայ՝ Ջէյիտի օղլի որդի Է, Մահ՝ Բէդէ որդի, Օսման՝ Մադուսի որդի, Դուայ՝ Ջուբէրի որդի, Աբու՝ Ալիէ որդի Է, Աբուլայ՝ Օմարի որդի, Ղահադիֆէ Խէր՝ Ասիբի որդի Ըուայի որդի Է, Ամարեայ՝ Միրի որդի, Յաշու՝ Ապայի որդի, Հասան՝ Սաբիթի որդի, Ք...՝ Մեւլիբի որդի, Քայր՝ Քայրի որդի, Ջահան՝ Աբութալլի որդի: Աստուած ռազի ուրէնցէն. Մովիէն իւր ձեռնովը գրէց փեղամպարին ասմունքովն, օրն Բ. շաբաթ Գ. տարի Ը. ամիս. հորիցն անցաց. ալհամարլահ ըռապ ըլլաւմին»:

Անունների մէջ եղած տարբեր ընթերցումներ՝ ըստ No. 2826 ձեռագրի. ա. Արու. Բ. Յարուշ. Է. Ջէյիտի որդի. Է. Ալիի որդի. Է. Ջահադի Ֆէլիբէր՝ Ասիբի որդի Ըուայի... որդի:

2. Նոր թարգմանութիւններ պարսկերէնից.

Թարգմանութիւն ի Պարսից լեզուէ Մեծ Մանշուր ասացեալ դաշնագրայ: Դաշնագիր Մեհմեմետի որ ի քրիստոնեայս, գրեալ ձեռամբ Ալիի. «Որ էնն Աստուած բարձրեալ: Յանուն Աստուծոյ գրածի եւ ողորմածի: Այս բան դաշն է ծանուցեալ եւ սիգել երեւելի եւ մուրհակ վաւերական եւ դաշն՝ որոյ պահպանութիւն է պարտականութիւն մուսուլմանաց վասն ամենայն ազանց օրինաց

<sup>3</sup> Համազանցի Աբրիտակէս երէցի մասին տես՝ Յ. Ս. Անասեան, «Հայկական մատենագիտութիւն», հտ. Բ, Երեւան, 1976, էջ 767—768:

քրիստոնէից եւ այլոց, որք բնակին ի սփիւռս աշխարհի...», Երեւանի Պետ. Մատենադարանի ձեռ. No. 2622, էջ 115ա—116բ:

Վերջում՝ «Հրամանաւ երանելի մարգարէին Աստուծոյ (նուիրեսցի օրհնութիւն Աստուծոյ նմա եւ գերզաստանի նորա) գրեցաւ ուխտադրութիւնս յաւուրն երկուշաբթի զկնի չորից ամսոց չորրորդ տարւոյն հիճրեթի: Բաւ է վկայութիւն արդարոյն տիեզերաց, որ ինչ գրեալ եղեւ յայսմ: Այլայլոզն նզովեալ եղիցի յԱստուծոյ»:

Թարգմանութիւնը կատարուած է Ն. Թ. Եպս. Բեկնազարեանցի կողմից, 30 օգոստ. 1851 թ., Նոր-Ջուղայում: Վերջում թարգմանիչը ծանօթագրում է.

«Օրինակ թարգմանութեանս Մեծ Մանշուր ասացեալ դաշնագրոյն մեծին Մահմամէտի ընդ քրիստոնեայս, որոյ իսկական լեալ է ի Քուֆի լեզու, յորմէ ժամանակաւ յեղափոխեալ ի Պարսից լեզու, եւ վկայեալ յերեւելի հոգեւորականաց Պարսից՝ գոլ նորա համեմատ բնագրին: Գտանի այժմ ի գրատան Սուրբ Ամենափրկիչ վանիցն Նոր Ջուղայու որ յԱպահան, յորմէ թարգմանութեամբ դաղափարեալ»:

Երկրորդ ծանօթութիւն՝ ուրիշ ձեռքով.

«Նաև գտաք այլ օրինակ, որ գրեալ էր 1853, յուլիս 30, ի Թէհրան, եւ ի ներքոյ գրոյն եղեալ էր ստորագրութիւն այսպէս թէ քարգմանեաց Գալուստ Շիրմագանեան»:

Գ. Շիրմագանեանի այդ թարգմանութիւնը կարող է լինել հետեւեալ հրատարակութիւնը.

«Վաւերացեալ օրինակ պայմանագրայ մարգարէին Արաբացւոց, տուեալ առ ազգն քրիստոնէից կամ Հայոց ի չորրորդում ամի հիմերէթի, որոյ այս է քարգմանութիւն».  
«Կամօֆն Աստուծոյ: Յանուն Աստուծոյ ողորմածի: Սոյն գրութիւն է հանրաձայնօր ըստ ձեռագրոյն եւ ըստ շարագրութեանն եւ պայման է հաստատուն, եւ դաշն է որ պարտականութիւն վասն ամենայն ազգաց քրիստոնէից եւ այլոց, որք գտանին ընդ տիեզերս...», տես՝ Հ. Թ. Տէր-Յովհաննեանց, «Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱպահան», հտ. Բ, Նոր-Ջուղա, 1881, էջ 147—153:

Բնագրի վերջում թարգմանիչը կամ հրատարակիչը աւելացնում է.

«Հաստատէ զվաւերականութիւն օրինակին այնմիկ ընդ իւրում նախագաղափարի

Մահամադ Ջաֆէր, որ է մինն է նշանաւոր յիմամից»:

3. Թարգմանութիւններ թուրքերէնից. Դաշնագիր Մուհամմէտի (Խալաֆ մարգարէին) ընդ Հայոց. «Այս օրհնեալ բուզը հրամայեցի գրել կամօքն Աստուծոյ, ըստ խնդրանաց բազմաց յագգէն Հայոց, որոնք կանխաւ դաշինք կրելով մտան Խալաֆներուն հովանաւորութեան ներքեւ. բարձր պահէ Աստուած իւր խօսքը: Եւ ես կը պարտաւորեմ Խալաֆ ազգին իւրաքանչիւր անհատը այս քղքոյն համաձայն ընթացաւ...»: Տես Մէհմուտի Ախպար, 14/27 յունուարի 1909 թ., No. 4633:

Բնագրի վերջում ասուում է.

«Այս դաշնագիրը գրուեցաւ ի ներկայութեան շատ մը ընտիր անձնաւորութեանց, որոնց վրայ հանգչի՝ Աստուծոյ հաճութիւնը եւ վկայից այսմ ամենայնի էպու Պէքիր Ըսէպտիք, վէ Ումուր Ուալն էլ Խէթթապ, Օսման Ուալն Աֆֆան, Ալի Իպն ու էպի Թալիպ, եւն եւն: Եւ գրեաց զայս Մաալիյէթ Ուալն ու Սէֆիան, հրամանաւ Աստուծոյ Առաքեալին Մուհամմէտի, որում զոհութիւն եւ ողջոյն Աստուծոյ: Յ2 զիլհուճէթի, յերկրորդ ամի նուրբական հաճրիթի»:

Թարգմանութիւնը կատարուած է Յովհան Ծ. Վ. Գուզեանի կողմից՝ ըստ երեւոյթի մեր դարի սկզբներին:

Նոյն բնագրի մի ուրիշ թարգմանութիւնն է հետեւեալը.

Հայ երեւելիներու եւ Խալաֆ Մուհամմէտ մարգարէի միջեւ կնքուած համաձայնագիրը. «Ըստ Հայոց ազգին բազմաթիւ անհատներու բաղձանքին նախապէս գոյացած համաձայնութեամբ մը Խալաֆներուն հովանաւորութեանը տակ մտնելովին, աստուածային հրամանին համաձայն, սոյն նուիրական պայմանադրութիւնը գրի առնել հրամայեցի...»: Տես Նոր Երկիր, 6 եւ 13 սեպտեմբերի 1934 թ.:

Այստեղից արտատպուել է նախ Հայրենիք-ում, 28 եւ 29 սեպտ. 1934 թ., եւ ապա՝ Արմենիա-ում, 1 դեկտ. 1934 թ.:

Բնագրի վերջում ասուում է, որ այս պայմանագիրը «Մուհամմէտ մարգարէի հրամանով Մաալիյէթ Իպնի Սէֆիյանը գրեց հիճրէթի երկրորդ տարին, զիլհուճէթ ամսոյ երկրորդ օրը»: Թարգմանութիւնը կատարուած է Լեւոն Ճերահեանի կողմից:

× × ×

Մահմեդի անունը կրող այս դաշնագրի ձեռագիր օրինակներ մեզ յայտնի են թէ՛ արաբերէնով եւ թէ՛ պարսկերէնով: Երեւանի Պետ. Մատենադարանի արաբատառ ձեռագրերից No. 358-ը ներկայացնում է դաշնագրի արաբերէն սկզբնագիրը՝ տող առ տող կատարուած պարսկերէն թարգմանութեան հետ միասին, արաբերէնը՝ խոշոր տառերով, ընդտողեայ պարսկերէնը՝ մանր տառերով: Այս բնագրին, որը «Մաալիյէ ձեռագրորին» (وكتب معاوية ابو سفيان) է եւ գրուած է հիջրի 4-րդ տարուայ 4-րդ ամսի երկուշաբթի օրը, ըստ ամենայնի համապատասխանում են հայերէն թարգմանութիւնները: Բազմատուութեան համար հետաքրքրական է արաբերէն բնագրի վկաների անունների ցանկը.

ابو بكر الصديق ، عمر بن الخطاب ، عثمان بن عفان ، علي ابن ابي طالب ، معاوية ابن ابي سفيان ، ابو الدرداء ، ابو هريرة ، عبد الله بن مسود ، عبدالله بن العباس ، حمزة بن عبد المطلب ، الفضل بن العباس ، الزبير بن العوام ، طلحة بن عبد الله ، سعد بن معاد ، سعد بن عباد ، ثابت بن قيس ، زيد بن ثابت ، عبدالله بن يزيد ، حرقوس بن زهير ، زيد بن أرقم ، اسام بن زيد ، سهل بن بيضا ، عثمان بن مطعون ، خوان بن جبير ، ابو العاللية ، عبد الله بن عمر ، عمرو ابن العاص ، ابو حديفة بن عتبة بن ربيعة ، عمار بن ياسر ، هاشم بن عتبة بن ابي وقاص ، حسان بن ثابت ، كعب بن مالك ، عبد بن رواحه ، جعفر بن ابي طالب .

Երեւանի Պետ. Մատենադարանն ունի նաեւ դաշնագրի արաբերէն բնագրի մի ուրիշ՝ թերի օրինակ, որոշ տարբերակներով, տես՝ Կաթողիկոսական դիւան, պարսկերէն վաւերագրեր, թղթապանակ 1ա, վաւերագիր 1գ: Այս բնագրին կից գտնուում է նաեւ դաշնագրի համառոտարար վերախմբագրուած պարսկերէն մի տարբերակը (երկու օրինակով, տես՝ թղթապանակ 1ա, վաւերագիր 1ա եւ 1բ), որը եւ տպագրուել է հետեւեալ հրատարակութեան մէջ. Յ. Գ. Փափազեան, «Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը. I. Հրովարտական», պրակ Ա, Երեւան, 1956, էջ 284—287, որի հայերէն թարգմանութիւնը՝ էջ 69—72, եւ ռուսերէն թարգմանութիւնը՝ էջ 189—193:

Բ. ԱԼԻԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Ալի բին Աբի Թալիբը Մահմեդի հօրեղբորդին ու փեսան էր եւ նրա 4-րդ յաջորդը՝ խալիֆայական դահի վրայ, 656—661 թթ.: Եղել է արաբական նուաճողական քաղաքականութեան հզոր ծաւալողներից մէկը: Հայկական մատենագրութեան մէջ պարսկերէնից թարգմանութեամբ ծանօթ է Ալիի մի անվաւեր հրովարտակը, որ նա տուել է իր հայ հարկատուների հովանաւորութեան համար՝ հիջրի 40 թուականի սաֆար ամսին, այն է՝ 660 թ. յունիս-յուլիս: Այլ է Մահմեդին վերագրուած հրովարտակը կամ դաշինքը, որն, ըստ պարսկական օրինակի, ասուում է «գրեալ ձեռամբ Ալիի», հիջրի 4-րդ տարում, այսինքն 626/27 թ., բայց դժուար է նկատել, որ սրանք միեւնոյն նիւթի տարբեր խմբագրութիւններն են, մէկը միւսից ծագած եւ ընդհանուր գծերի մէջ բովանդակութեամբ նոյն, այն տարբերութեամբ, որ Մահմեդինը տրուած է ընդհանրապէս բոլոր տեսակի քրիստոնեայ ազգերին, մինչ Ալիինը՝ յատկապէս հայերին:

\*\*\*

Ալիի հրովարտակի հայերէն թարգմանութիւններից մի օրինակ ունի Վենետիկի Մխիթարեան Մատենադարանը, թարգմանչի կողմից հետեւեալ յիշատակագրութեամբ. «Այս գիր ուխտի թարգմանեցի ի Պարսից լեզուէ ի Հայոց բարբառ Գրիգոր Կամբանեան յամի Տեառն 1767, յունվ. 15, ի յԱժգարխան: Հաղթէթի Ալիին տուած Հայոց Ֆէրվէէկն (привилег) է». իսկ սրա տակը՝ «Ճշմարտութեան իրիս այսմիկ վկայ գտլով ես ներգեւեալ հոգի Յովակիմ Գրիգորովի Բագրատունեան՝ սնեալ ի Պոնտոս եւ բնակեալ եմ ի Կոստանդնուպոլիս, օրինակեալ զայս գիր ետու եղբորն իմոյ հարազատի եւ սիրելոյն իմոյ Թորոս աղայի Ղըբմպէկեան յամի Տեառն 1804, Ապր. 20. յՕտէս»:

Մի ուրիշ օրինակ, որի թուականը յայտնի չէ մեզ, բայց որը հաւանօրէն աւելի հին պէտք է լինի, գտնուում է Երուսաղէմի Հայկական Մատենադարանում:

Գուցէ աւելի նոր թարգմանութիւն լինի Բագմալիպ ամսագրում Գ. Շիրմազանեանի հրատարակած բնագիրը, որի տակը յիշա-

տակագրուած է. «Թարգմանեաց Կողմեթսկի սեկրետար Մ. Սարաջեան»: Կարծուում է, որ Սարաջեանը ո՛չ թէ նոր թարգմանութիւն է կատարել. այլ պարսկերէն բնագրի հետ բաղդատել ու սրբագրել է Կամբանեանի թարգմանութիւնը:

Ա. տպ. — (Անխորագիր) «Յանուն Աստուծոյ բարեբարին եւ գրածի, յորմէ հայցեմք զօգնութիւն: Գոհացողական փառատրութիւն արարողին տիեզերաց եւ յարգական խաղաղութիւն մեծի պետին եւ բարեբարդին Մահմետի ընդ նմին եւ սրբազան տոհմի նորա: Յետ այս ամենայնի, այս է բան քարգմանութեան ուխտին, գոր գրեաց Հաշամ որդի Աքապայ որդի Վաղասայ...» (հրատ. Գ. Շիրմազանեան), տես՝ Բագմալիպ, 1848, էջ 213—215:

Բնագրում ասուում է, որ հրովարտակը տրուած է խնդրանքով հետեւեալ անձերի. «Յակոր Սէյիտ, Արդէլուիս եւ որդին Սահանայ եւ Արբահամ քահանայն, Նասայի եպիսկոպոսն եւ այլք բազումք մինչեւ քառասուն անձինք», որոնք «առնէին բարբերութիւն եւ այցելութիւն զործակալին մերոյ՝ զոր առաքեալ էաք ի վերայ բերդորէից եւ ի սահմանադրութիւն»:

Այլ տպ. — Հրովարտակ Ալիի. «Յանուն Աստուծոյ բարեբարին...», տես՝ Սիոն, 1875, էջ 37—39:

Արտատպութիւն է նախորդ հրատարակութիւնից:

Ալիի այս հրովարտակի արաբերէն բնագիր ծանօթ չէ մեզ: Գ. Շիրմազանեանը նրա պարսկերէն բազմակնիք թարգմանութիւնն էր գտել Արտաւիլում եւ պատճէնն ուղարկել էջմիածին 1844 թ.: Պարսկերէն մի ուրիշ օրինակ գտնելով Երեւանի թեմական ատեանի (կոնսիստորիայի) գանձարանի արկղում՝ թեմի առաջնորդական փոխանորդ Նիւրապար արքեպիսկոպոսը 1 փետր. 1875 թ. մի նամակով այդ ուղարկել էր կաթողիկոսին, էջմիածնի գանձարանի պարսկերէն թղթերի շարքում պահուելու համար<sup>4</sup>: Այդ օրինակը տես այժմ Երեւանի Պետ. Մատ. արաբատառ

<sup>4</sup> Նամակը տես՝ Երեւանի Պետ. Մատ., Կաթողիկոսական դիւան, թղթ. 227, վաւ. 110:

ձեռ. No. 357, որի միւս երեսում կան Հայերէն հետեւեալ անձիչտ նշումները. «Մեծ Մահմատ փեղանպարի գիրն է որ այլազգիքն Հայոց ազգին զօռ չանեն» եւ «Մեծ Մահմատ փեղանպարի գիրն է վասն Հայոց կողմանէ որ թուրքն Հայոց զօռ չանէ»: Բնագրի կրած թուականն է հիշրի 40-րդ տարւայ սաֆար ամիսը:

Նոյն մատենադարանն ունի նաեւ պարսկերէն այս բնագրի ուրիշ չորս ընդօրինակութիւններ, տե՛ս Անհատական արխիւների Փոնդ, Թղթապ. 80դ, վաւ. 38, Թերթեր 4ա—4բ, 8ա—8բ, 9ա—9բ եւ 16ա—16բ<sup>5</sup>:

Գ. Շիրմազանեանը ուսերէնի է թարգմանել այս բնագիրը՝ իր գտած օրինակից. նրա թարգմանութիւնը լոյս է տեսել Թիֆլիսի *ՀԱՅԿԱՅ ԹԵՐԹՈՒՄ*, 1852, No. 75, որից Բ. Բարխուդարեանը տուել է Հայերէն մի նոր՝ աշխարհաբար թարգմանութիւն, «Հայոց ազգին տուած՝ Ալիի հրովարտակը», Լումայ, 1904, No. 5, էջ 32—35:

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

<sup>5</sup> Հմտ. նաեւ, Յ. Դ. Փափազեան, «Մատենադարանի պարսկերէն վաւերագրերը. I. Հրովարտակներ», պրակ Ա, էջ 100—101:

## Codex 679 – eine armenische Prachthandschrift als Faximiledruck in Wien präsentiert

Heide und Helmut Buschhausen, Das Evangeliar Codex 697 der Mechitharisten-Congregation zu Wien; eine armenische Prachthandschrift der Jahrtausendwende und ihre spätantiken Vorbilder, Faksimile sämtlicher Miniaturen im Codex; herausgegeben und kommentiert von Heide und Helmut Buschhausen, fotografische Aufnahmen Wladimir Narbutt-Lieven und Ingrid Schindler; 335×458 mm, 16 Tafeln Faksimile, 48 Seiten Text mit zahlreichen Vergleichsabbildungen, Halbpergament im Schuber. Einmalige numerierte Auflage von 1000 Exemplaren; Union Verlag Berlin. — Preis M 480,—.

\* \* \*

Am 6. Oktober 1981 wurde im Empfangssaal des Mechitharisten-Klosters in Wien die Faksimile-Ausgabe des Codex 697 präsentiert. In Anwesenheit zahlreicher Gäste aus Kirche, Kunst und Wissenschaft, begrüßte der Generalabt der Mechitharisten Congregation, Pater Dr. Gregoris Josef Manian, unter anderen auch den Botschafter der Deutschen Demokratischen Republik, Gerhard Schramm. Nach einführenden Worten zur Technik der Herstellung durch den Direktor des Union Verlages Berlin, Dozent Dr. habil. Hubert Faensen, sprach der Autor des beigegebenen Kommentars, Univ.-Prof. Dr. Helmut Buschhausen, zur kunstgeschichtlichen Stellung der Handschrift Codex 697.

Nach der Überreichung eines Exemplares der Faksimile-Ausgabe durch Botschafter Schramm an den Generalabt der Mechitha-

risten-Congregation, beendete ein Empfang die gelungene Präsentation.

\* \* \*

Der in der Bibliothek der Mechitharisten-Congregation in Wien aufbewahrte Codex 697 ist ein prachtvolles Denkmal hocharmenischer Buchmalerei der Jahrtausendwende, das der Öffentlichkeit kaum zugänglich ist.

In Vashpurakan entstanden, zeichnet er sich durch sein außergewöhnliches Format und die reiche malerische Ausstattung aus und wird nun erstmalig in einer Faksimile-Ausgabe reproduziert.

Diese Prunkhandschrift ist ein bedeutendes Zeugnis früher armenischer Buchmalerei, die zugleich die engen Beziehungen zur spätantiken Architektur, Buchmalerei und Kleinkunst belegt.

Der künstlerische Wert kann mit ähnlichen Werken des 10. Jahrhunderts, etwa dem Evangeliar von Etschmiadzin (Matenadaran, Jerewan) und dem Evangeliar der Königin Mlke (San Lazzaro, Venedig) verglichen werden. Erhalten hat sich der illustrierte Vorsatz zu einem Tetra-Evangeliar. Während der Einleitungsbrief des Eusebius, die symbolisch-ornamentalen Kanontafeln und die figuralen Darstellungen überkommen sind, gingen die Evangelientexte verloren. Die Miniaturen zeigen die vier Evangelisten, die Isaakopferung, die Geburt, die Taufe und die Kreuzigung Christi. Sie weisen hocharmenische und einige syrische Stilelemente auf, bezeugen zugleich aber auch, wie